23. ՏԱՄՆԷՐԿՈՒ ՑԸՂՈՆԵԳՑԸ

Բուննան ա̈վա̈լա̈ ընում ա, ըլնո̈ւմ մին թաքավէր։ Էտ թաքավէրը շատ հարուստ ա ընում, ամմա շատ բեքյեփ ա ընում, սա̈բա̈ը էն ար, վէր խոխա չօնար։

Ղուլէրը, ղարավաշնին ընդրան ամման վախտ հըրցընում ին, թա խե՞ յա բեքյեփ, թաքավէրն ասըմ ար. — Հա̈լբա̈թ մին պեն կա իլի՛, վէր բեքյեփ ըմ։

Մին դո̈նում էլ թաքավէրը ո̈ւրա̈ն թեգյունքը պահողներեն նհետ քյո̈ւնո̈ւմ ա վըերսի։

Մին օր անց, վըերս ընելանը ետը ծըրավում ա, ո̈ւրա̈ն ղարավաշներեն ղըրկում ա, վէր քյինա̈ն ճո̈ւր պերին։ Ղարավաշնին շատ ըն ման կյամ, վէրչը մին ճըրա̈վէր ըն ճարում։ Քյըլնո̈ւմ ըն մուտանում, վէր ճո̈ւր յոր օնին, ճո̈ւրը ետ ա քաշվում ճըրըվէրեն տակը։ Ընդըրանք մնում ըն ըրմացած։ Վէր մին պատառ տեն ըն քյըլնո̈ւմ, ետ ըն եշում, տըեսնում ճո̈ւրը էլհա լցվալ ա, ճըրըվէրեն պըրա̈նա̈ն եր ա տըեռնում։ Ընդըրանք մին էլ ըն քյըլնո̈ւմ, թա ճո̈ւր յոր օնին, էլհա ճո̈ւրը ետ ա տըեռնում ճըրըվէրեն տակը։

Ղարավաշնին շո̈ւտ ըն անըմ, քյըլնո̈ւմ թաքավէրեն ասըմ։ Թաքավէրը կըզնվում ա, ասըմ. — Իտի պեն չինիլ, քյըլնա̈ցիքյ ճո̈ւր պերիքյ։

Ղարավաշնին մին էլ ըն քյըլնո̈ւմ, վէր ճո̈ւր յոր օնին։ Ճո̈ւրը էլհա ետ ա տըեռնում ճըրըվէրեն տակը։ Ըտրանք մին էլ ըն քյըլնո̈ւմ, թաքավէրեն ասըմ։ Թաքավէրը էս դո̈նում կըզնըված ինքյըն

էլ ա ղարավաշներեն նհետ կյամ ճըրըվերեն կոշտը։ Ամանը քըշը-ցընում ա, վեր ճո̈ւր յոր օնի, խըմի, էս դո̈նում ճո̈ւրը քըշանում չի։ Նա ամանավը ճո̈ւր ա յոր օնում, թա խմի, մին էլ ա տըեսնում մին ղըրըլթու ո̈ւրա̈ն պենդ խոտալ ա, մին թոխտ ա նշանց տամ, վերին մեշան էլ մին ծեն ասըմ ա.

«Էտ թուխտեն տակեն ծըեռք քաշի, դե հա՛, շուտ ըրա...» Թաքավերը չա̈շմիշ ա ինո̈ւմ, ծեռք քաշում։ Վեր էտ ղըրըլթուն ո̈ւրա̈ն պեց ա թողում, քյնո̈ւմ ճըրըվերեն ճո̈ւրըն էլհա շըտանում ա, լըցնվում։ Ըտրանա ետը, վեր ղարավաշնեն մուտանըմ ըն ճո̈ւր յոր օնին, էլ ճո̈ւրը քըշանում չի։

Էտ լօխ Թաքավերը տըեսնում ա, սուսուփուս ետ տըեռնում ո̈ւրա̈ն պալատը։ Հենց վեր պալատըն ա կյամ, ղարավաշնին վազ ըն տամ Թաքավերեն առաչը, աշկալյո̈ւսանք տամ, ասըմ. — Թա-քավերը ապրած կենա, աշկտ լո̈ւս, քյըեզ մին տղա յա իլա̈լ։

Թաքավերը ըտրանա շատ ա ըրքյփանում, վեր էնքան տարի յա անց կացալ խոխա չի իլա̈լ, մըհենգյ էլ իլա̈լ ա, էն փիս պըտահ-մունքին վախտը։

Անց ա կենում մին խիլլա̈ վախտ։ Թաքավերին կընեգյը մըեռ-նում ա։

Մահվան յրա, կանչըմ ա ո̈ւրա̈ն տըղեն, ընդըրան մին խաչ ա տամ, ասըմ.—Կա՛ էս խաչը, վեր նըեղ տըեղ ընգնիս, մըետո քըցի, քյըեզ կաղադի։

Տըղան վեր տըեռնում ա քըսան տըրեկան, հորն ասըմ ա. — Ա՛ հա̈ր, մինչև հի՞բ բեդմա էս պալատում մընամ փակված։ Թող տո̈ւս կյամ, տըեսնամ աշխարքումըս հինչ կա։

Հա̈րը ռազի յա կըենում, տըղեն պեց ա թողըմ։

Տըղան ամեսներավ ճընապար ա քյընո̈ւմ։

Քյընո̈ւմ ա, քյընո̈ւմ, տըեսնում ա մին բաղ։ Էտ բաղումը լա̈վ-լա̈վ ծառեր, կանանչ խոտ, ծաղեգյ, հիշքա՜ն ասիս կա։ Նի յա մըն-նում, տըեսնում մին լա̈վ գյոլ։ Ինքյը նըղացած, էտ գյոլին քըշտի կանանչ տըեղը թեգյ ա ընգնում, վեր դինջանա։

Տըեսնում ա, վեր հեռու տըեղան տասնէրկու սիպտա̈կ յըղոնեգյ ըն թըռչում, կյամ էտ ծառերին նան կանանչներին մեչը, դիբի գյո-լին ղոլը։ Մին էլ ա տըեսնըմ, վեր էտ յըղոնեգյնին ո̈ւրա̈նց թևերը հանեցին, տըեռին տասնըէրկու ախչիգյ, ըսկըսեցին գյոլին մաչին լըղանալը։ Հա̈մին էտ վախտը, էտ տըղան սիրահարվում ա էտ ըխ-ճըկորցան լոխճան պուճուրին յրան։

Էտ տըղան յավաշ-յավաշ խոտերեն մաշավը կյողըը կենալավ

քյընում ա էտ լոխան պուճուր ըխճրկանը թևերը յոր օնըմ, կյեղում։

Հիբը վեր լոխ լըղանում ըն, գյոլան տուս ըն կյամ, ուրանց թևերը կյենում, ամմա էտ պուճուր ախչիդյը տրեսնում ա, վեր ուրան թևերը կա վեչ։ Տա ըսկըսում ա լաց ինիլը։ Էն տասնըմին յըղոնեգյը տրեմ չըն կենում, թըռչում ըն, քյընում։ Էտ վախտը, էտ տըղան քոլերին մեչան տուս ա կյամ, թևերը տամ էտ ըխճրկանը։

Համին էտ վախտը, էտ ախճիգյն էլ սիրահարվըմ ա էտ տըղեն յրա։ Ախչիդյը նան տըղան ըսկըսում ըն ուրուր նհետ խոսիլը։

Ախճիգյն ասըմ ա. — Եկ քյընինք մըեր երգյիրը։

Տըղան չողարը տամ ա, ասըմ. — Ախեր յրես թևեր չօնիմ։

— Ցրես երգյինքավը կթըռչիմ, տու վէլ տափավը կրկյաս ուրուր հավասար, մին տեղ էլ կը հըսնինք մըեր երգյիրը։

Տըղան ռաղի յա կրենում։ Ախճիգյը կյենում ա ուրան թևերը երգյինքավը թըռչում, տըղան էլ տափավը կյամ ա ըխճրկանը հավասար հըսնում ընգրա հորը երգյիրը։ Ախճիգյը շուտ ա անըմ, քյընում, նի մննում ուրան օթախը, տըղան էլ նի յա մըննում պալատը։

Վեր նի յա մըննում պալատը, թաքավերը տրեսնում ա էտ տըղին, յրան աշըղվըմ, ասըմ. — Էսքան վախտ էտ ըշտրե՞ղ ըս իլալ, քըսան տարի յա յրես քյրեզ ըսպասըմ ըմ, ամմա տու մըհեկ ըս կյա՞մ։

Տըղան ըտրա շողարը տամ ա, ասըմ. — Ցրես միչև մըհենգյ, վեշ մին պեն չըմ գյուդում, մըհենգյ էլ չգյիդալով ըմ յեկալ։

Թաքավերն ասըմ ա. — Քսան տարի ըստրանա առաչ, յրես քու հոր նհետ կանդրախտ ըմ կապալ, ինքն էլ ծրեռք ա քաշալ, վեր հիրը ուրան տըղա ինի, հենց առաչի օրը զարկի իմ կոշտըս։ Իմ մրեթկըս էն ար, վեր քյրեզ պըհի, մըծըցընի, իմ թաքուն պեներս, գյիգացածըս քյրեզ սըվըրցընի, պուճուր ախճիգյըս էլ քյրեզ տվի։ Մըհենգյ տու մրեծ ըս, ըստրանա ետը քյրեզ հի՞նչ ըմ անըմ, եկալ ըս, վեր քու կլոխըտ կտրի՞մ...

Էս թաքավերը կախարթ ա ինում, ուրան ըխճրկերքըն էլ ըն կախարթ ինում։ Թաքավերն ասըմ ա. — Տու մին խըրեգյ մրեխկըս ըս կյամ, յրես քու կըլոխտ հալա կըտրում չըմ, մինակ մին պայմանավ, վեր իմ տըվածը իրեք ասածըս անիս։

Էն մին օրը թաքավերը էտ տըղին կանչում ա ուրան կոշտը, ասըմ. — Իմ առաչի ասածըս, վեր էքուծ քըշերավ պիտի կադարիս, է՛ն ա, վեր յրես տասնըէրկու ախչիդյ օնիմ, լոխ էլ սիպտակ յը-

ղոնեգյի թևեր կյեցած, ընդրանց մեչին մրեծն նան պուճուրը կարիլ չրս ճոկիս։

Քրշերավը լոխճին առաչը ցորեն ըմ ածելու։ Ընդրանք պիտի դինչ օտին։ Տու պիտի իմ պուճուր ըխճրկանրս ընդրանց մեչան ճոկիս։

Թաքավերը էտ տրղին մին ճոկ օթախ ա տամ, վեր մրտածի։ Տրղան քյընում ա ուրան օթախը։ Ուրուգյունատեմ ա ինում։ Տրղան քնենքյ ա անրմ, թա էտ տասնէրկու յրղոնիգյներին մեչան պուճուր ըխճրկանը հո՞ւնց ճարի։

Էտ վախտը մին էլ ա տրեսնում մին ճանչ տրզզալավ ակուշկավը նի մրտավ։ Ճանչը տրեռավ համին էն պուճուր ախճիգյը, ասից. — Իմ հար քյրեզ հի՞նչ ասից.

— Ասից, վեր էքյուծ քրշերավ լոխճիտ առաչը ցորեն ա շաղ տալու, վեր օտիք, յրես էլ էտ տասնրէրկու յղոնեգյեն մեչան պիտի քյրեզ ճարիմ։

Ախճիգյը լրսելանը ետը, ասից. — Ըտրանա էլ հիշտ պե՞ն... Քրշերավ մունք լոխրս սիպտակ թևեր կյեցած տուս ընք կյալու բաղը, իմ հար պերելու յա մրեր առաչը ցորեն ածի։ Էն վախտը կտեսնաս վեր ըտրանցանա մինը ցորենը յոր ա օնրմ կրտուցավը, էլհա քրցում տափը, ետավ մին էլ յոր օնրմ, պրրանրմը պահրմ. մին խրրեգյ ըսպրսելանը ետը, կը տրեսնաս վեր ցորենն օտրմ ա։ Էն վախտը կրգյիդաս վեր յրես ըմ։ Հալա մրհեգյ դինչ թեքյ ընգի, քոն իլ։

Էտ ըսելանը ետը, էտ ախճիգյը մին ճանչ ա տրեռնրմ, ակուշկավը տուս կյամ։ Տրղան մին խրրեգյ մրտածելանը ետը թեքյ ա ընգնում, քոն ընում։

Քրշերավը թաքավերն ուրան ղարավաշնին ղարկրմ ա, վեր էտ տրղին կանչին։ Տրղան զարթնում ա, շորերը կյենում, տուս կյամ բաղը։ Մին խրրեգյ ետը տրեսնրմ ա, վեր էտ տասնրէրկու յրղոնիգյնին էլ եկին բաղը։ Թաքավերը ըտրանց առաչը ցորեն ա ածրմ, լոխ ըսկրսում ըն օտիլը։ Մին պատառ ետավ թաքավերը էտ տրղեն անա հրրցրնում ա, թա. — Վրերն ա պուճուր ախճիգյրս։

Էտ վախտը տրղան տրեսնում ա, վեր ըտրանցանա մինը ցորենը կրտուցավը յոր ա օնրմ, էլհա տափը քրցում, մին էլ ա յոր օնրմ, պրրանրմը պահրմ, մին խրրեգյ ետը օտրմ։ Տրղան նշանց ա տամ էտ պուճուր ըխճրկանը։ Թաքավերը տրեսնում ա, վեր դուզ ա ասալ, քրնենքյ ա անրմ, թա էս հո՞ւնց գյիդաց, էս հո՞ւ ասից, բալքյաս ըխճրկորցանը մինը կապ օնի ընդրա նհետ։

Թաքավերն ասում ա. — Լավ, էտ մինըտ գյիգացիր, մրհեգյ էլ իմ էրկունշի ասածըս պիտի կըդարիս։ Մին քըշերվա մեչին տու պիտի իմ պալատիս տիմացը մին իտի պալատ շինիս։

Ուրան խոսկը ըսելանը ետը թաքավերը հրամմայում ա էտ տըղին, վեր շուտ անի, քյընա ուրան օթախը։ Տըղան քյընում ա ուրան օթախը, ըսկըսում քնենքյ անիլը։ Մըթնալ ար, մին էլ ա տըեսնում ակուշկավը մին ճանշ եկավ, էլհա ախճիգյ տըեռավ, ասից. — Իմ հար քյըեղ հի՞նչ ա ասալ։

Տըղան ասում ա.— Քու հար ասալ ա, վըեր մին քըշերվա մեչին իմ պալատիս առաչին մին հենց պալատ շինի, վեր իման էլ լավ ինի։

— Էտ ա՞ մին պե՞ն, քընենքյ մի անիլ, թեքյ ընգի, քյըեղ հետե քոն իլ։ Ուռութանա եր կը կենաս, կը տըեսնաս պալատը հազրը ա։

Ախճիգյը էլհա ճանշ ա տըեռնում, ակուշկավը տուս կյամ։ Քըշերավը տղան շուտ եր ա կենում, տըեսնում թաքավերին պըլատեն նման մին պալատ ա շինած։ Նա մընում ա մաթալ։ Տուս չի կյամ օթախան, ըսպասում ա, վեր թաքավերը ինքը կանչի։ Թաքավերը քըշերավը շուտ զրեռթնում ա, տըեսնում, վեր պալատը շինած ա, կըլխու վա ընգնում, վեր էտ տըղին պենը չի՞, վեր ուրան ըխճըկորցան մինը կապված ա էտ տըղին նհետ։

Կանչում ա տըղին ուրան կոշտը, ասըմ. — Իմ էրկու ասածըս ըրալ ըս, վըեր իրեքինշի ասածըս էլ կագարիս, քյըեղ ըսպանելու չըմ, վեր կագարիս վեչ, կըլոխտ կըտրել ըմ տալու։ Էքյուծ ուռութանա, տու իմ կոխկիս կընըստիս, մին մունուտումը մին ճոխտ վընտման կըկարիս։ Մըհեգյ քյընա՝ քու օթախտ մըեթկ ըրա։

Տըղան շատ ըեքյեփ քյընում ա ուրան օթախը մըետք անըմ, թա հո՞ւնց անի, հի՞նչ անի, վեր էտ գարդան տուս կյա։ Կըես քշերը անց ար կացալ, վեր ակուշկավը ճանշը նի յա մընում օթախը, ախճիգյ տըեռնում, հըրցընում, թա հարը հինչ ա ասալ։

— Քու հար էս դոնըմըս առռե շատ մին տըժեր պեն ա ասալ, վեր յըես պիտի ուրան կոխկին նըստիմ, մին ճոխտ վընման կարիմ, մին մունուտումը։ Քու հար հըսկացալ ա, վըեր յըես կապ օնիմ ուրան ըխճըկորցան մինին նհետ։ Ըտրա հետի էլ առռե տըժեր պեն ա ասալ, վեր կարինք վեչ կադարինք, վեչ յըես, վեչ տու։

Ախճիգյը ասում ա. — Հնար չիկա, վեր ասեր ճոկ նըստի կարի, ամալ կըկյար։ Ամմա ասալ ա, վեր ուրան քըշտին նըստիս։ Գյուդում չըմ, թա հինչ անիմ, էլ օրիշ ճար չիկա, պիտի փախչինք։ Էրկուսըն էլ ռազի յըն կըենում, վեր փախչին։

Ախճիգյն ասում ա. — Առաչ տու ակուշկավը տուս եկ, ետավ՝ յրես։

Իտի էլ անում ըն։ Քրշերավը թաքավերն ուրան ծրոտանցան մինին ըղարկում ա, վեր էտ տղին կանչին ուրան կոշտը։ Ծառան տոռ-նը թակում ա, տրեսնում վեր պեց չի՞։

Թաքավերը հրամմայում ա, ասում. — Շուտ եր կրցրրեքյ, պերեքյ ըստրեղ, ըտրա մահը յրա յա հրսալ, էտ խե՞ չի զարթնում։

Ծրոտենքյը քյընում ըն տոռնը թակում, տեսնում սաս, սա-մուր չի կա։ Էն վախտը օգում ըն ակուշկավը նի մրննին, տրեսնում ըն ըխճրկանը պատկերը շուշին մեչան ծրծաղում ա ծրոտանցը յրան։

Ծրոտենքյը քյընում ըն թաքավերին ասում։ Թաքավերը շատ ա ըշրղվում, ուրան ծրոտանցը մին էլ ա հրամմայում, վեր ըտրանց ճարին, ամմա հիշքան էլ ման ըն կյամ, վեչ ախճիգյն ըն ճարում, վեչ էլ տրղան։

Թաքավերը էտ վեր լրսում ա, ծրոտանցը հրամմայում ա, վեր քյընան ընդրանց քյրթնին։ Ծրոտենքյը հրղե յրն ընում, վեր ընդրանց ման կյան, ճարին։

Ախճիգյն ասում ա. — Իմ հար մրեր հետան ա զարկալ, բիդի կյողլը կրենանք։

Տրղան ասում ա. — Հի՞նչ անինք։

Ախճիգյն ասում ա. — Ցրես մին կարմունջ տրեռնում, տու էլ իլ կարմունջին տակավը քյընող ճուր։

Իտի էլ ինում ա։ Ախճիգյը տրեռնում ա կարմունջ, տրղան՝ կարմունջին տակավը քյընող ճուր, ծիյանքն էլ՝ քար։

Թաքավերեն ծրոտենքյը միչև կարմունջը կյամ ըն, տրեսնում վեշ մին պրեն չի կա, ետ ըն տրեռնում, քյընում։

Թաքավերն ասում ա. — Ճընապարին հի՞նչ տրեսիք։

— Թաքավերն ապրած կենա, տրեսինքյ մին կարմունջ, ընդրա տակավը քյընող մին կյետ։

— Թու՛, հարամզադեքյ, բա տուք գյուդում չը՞ք, վեր մրեր քըղաքան մոտիկ կարմունջ չիկա։

Ծրոտանցը մին էլ ա ղարկում, վեր քյինին ըխճրկանը ճարին։

Ախճիգյը էտ գյիդալով տրղին ասում ա. — Էլհա հարրս մարթ ա ղարկալ մրեզ քրթնին։ Ցրես տրեռնում մին սուն, տու էլ՝ ընդրա յրրան մին փանար, ծիյանքն էլ քարեր։

Իտի էլ անում ըն։ Ծրոտենքյը կյամ ըն, ըտեղավ անց կենում, պեն չըն տրեսնում։ Կյամ ըն թաքավերեն ասում, վրեր ճարալ չըն։

Թաքավերը առռի յա ըշըղվում, ասըմ. — Ցրես ինքըս կըքյինիմ ընդրանց ճարիմ։

Ախճիգյը գյուդնում ա, ասըմ. — Հարկավեր ա իմ հոր քըղաքան տունս կյանք, օրիշ հնար չի կա՞։

Էտ վախտը տըղան մըետն ա քյըցում մորը տված խաչը։ Ըտրա զորութունավը էտ քըղաքան տունս ըն կյամ, քյընամ մին օրիշ քաղաք։ Ախճիգյը տրեռնում ա ժամ, տըղան էլ տերտեր, ծիյանքն էլ զանգեր։

Ըխճրկանը հաՐը տրեսնում ա, վեր ըտահանք կան վեչ, հույսը կըտրած նի յա մընում ժամը, տերտերին անա հըրցընում.

— Տեր հայր, տրեսիք վեչ մին տըղա մին ախճիգյ ըստեղավ անց կենալիս։

— Թաքավերն ապրած կենա, տրեսի—էրկու կյարմուր ծիյավեր, մին սրհաթ ըստրանա առաչ, էս հըղրցավը քյընալիս։ Թաքավերը հույսը կըտրած ետ ա տրեռնում ուրան քաղաքը, տըղան նան ախճիգյը ուրանց ճընապարը շարունակում ըն։ Հիրը հըսնում ըն էն տըղին հորը քաղաքը, ախճիգյը ասըմ ա. — Ցրես տրեռնամ մին ծաղեգյ, էս կանանչ, ծաղեգյներավ լիգյը տրեղը. տու քյինի ծրեր պալատը, տրես քու հաՐ հունց ա, սաղ ա, սրեյրու ա, հի՞նչ կա, հի՞նչ չիկա ծրեր քաղաքումը։ Ետնան կըկյաս ինձ տանիս։ Ըտրանա կըման, հըղեցը տու պըտրհելու յըս մին պուճուր, կյեղեցիկ խոխի, ղաստ ըրա վըեր պաչիս վեչ, թա վեր պըչեցիր, ինձ մոռանալու յըս։

Տըղան կյալիս ա գիրի ուրան հորը պալատը։ Հըղեցը պըտահում ա մին պուճուր, նախշուն խոխի։ Օգըմ ա պաչի, ամմա մրետն ա քըցում էտ ըխճրկանը ասածնին, մին էլ հրռանում ա։ Մին էլ մըտածըմ ա, ուրան մրթկումը ասում. վեր «խե՞ պիտիմ էն ըխճրկանը մոռանալ», ետ ա տրեռնում, էտ խոխին պաչըմ։ Վըեր պաչըմ ա, ծրեռաց մոռանում ա էն ըխճրկանը։

Հիրը պալատն ա հըսնում, հաՐը, մարը ուրխանում ըն։ Մրեծ պագրաստութունավ տըղին ընթունում ըն։

Մին քանի վախտ անց կենալանը ետը, հաՐրն ասըմ ա. — Ա՛ բալա, էտա հրսալ-փրսալ ըս, հարկավեր ա քյըեզ հետի ախճիգյ օղած, քյըեզ փրսակած։ Տըղան ռազի յա կըենըմ։

Էս քաղաքիցը մոտիկ մի օրիշ թաքավեր կար։ Ընդրան օնար մին շատ ղաՐանգյ ախճիգյ։ Էտ ըխճրկանը նշան ըն տամ էտ տըղին հետի։ Մին քանի շեփտանը ետը հրրսանիք բեդմա անին։

Համին էտ քաղաքումը ապրըմ ար մին շատ լաՐվ նկարիչ։ Նա նկարում ար սարերը, հանդերը, չՐերը, ղաՐանգյ տրեղեր։ Նա մին

դռնում էլ տրեսնում ա, վրեր էտ ծաղեգյներեն մեչին կա մին շատ նախշուն ծաղեգյ։ Նա մուտանում ա, տրկռիքյավը հանում, տանում տոն, տինում մին ծաղկամանի վրեղի մեչի։ Էտ նկարիչին տանը վեչ մին մարթ չիկար, ինքն էլ սուբեհ ար, խալաստոյ. ինքն էլ՝ քյասիր ար։ Ամուն օր, հիքը էտ նկարիչը կործի ար քյինում, էտ ծաղիկը ախճիգյ ար տրեռնում, ըսկըսում տուխուր երքեր ասիլը,— տոն-տրեղ հրվրքելիս լաց ինիլը։

Նկարիչը կյամ ա, տրեսնում տոնը, տրեղը հրվաքած, ղաշանգյ։ Տա մընամ ա ղարմացած, թա էտ հու կինի, հու չինիլ։ Մին էրկու դռնում վեր իտի յա անըմ, էտ նկարիչը կյողլ ա կրենում, տրեսնում, վեր ուրան պրերած ծաղիկը ախճիգյ տրեռավ, ըսկսից մին ղոլան տոնը հրվաքիլը, մին ղոլան էլ տխուր երքեր ասիլը։ Էտ վախտը նկարիչը կյողլը կացած տրեղան տուս ա կյամ, տրեսնում մին հուլումալագյ ախճիգյ։ Ախճիգյը հրմանչում ա, մընում տրեղը կաղնած, լաց ինում։ Նկարիչը մընամ ա ըրմացած։

Ասըմ ա. — Ըշտրղացի՞ յըս, ըշտրղա՞յըս եկալ, թո՞րն ըս քյընում հո՞ւվ ըս, հո՞ւ չըս։

Ախճիգյը լոխ նաղլ ա անըմ, ետնան ասըմ. — Ծրեր քըղաքումը էն տրղան նըշանվա՞լ ա՞։

Նկարիչն ասըմ ա. — Էս քըշեր ընդրա հրրսանիքն ա։

Ախճիգյը նկարիչին ղաշանք ա անըմ, ասըմ. — Քյինա՞ էն հրրսընքատրեռնը ասի. «Իմ ախճիգյս շատ լավ թխվածկնի յա թրխըմ, թող կյա ծրեղ քյոմաագյ անի»։

Նկարիչը քյինում ա, ասըմ։ Էն պադրաստոթուն քաշողնին ասըմ ըն. — Թող կյա։

Ախճիգյը կյամ ա, թրխվածքնի թրխում, մուտանին մեչին տինում, ասըմ. — Էս թրխվածքը տարիք տրվիք փեսացուվեն։

Հրրսընքատարերը կադարում ըն էտ ըխճրկանը խնթիրքը։

Տրղան թրխվածքը օտելիս, մրտանին ընգնում ա ընդրա պեռանը։ Նա պերանիցը հանըմ ա, տրեսնում, դաստի օշը տանըմ ա։

Լոխ վախըմ ըն, թա հի՞նչ պրտահի՞ց փրսրցուին։ Վեր տրղին օշը կյլոխն ա կյամ, հրամմայում ա ուրան կոշտը պերին էն թրխվածքը թրխողին։ Վեր պերում ըն, թաքավերին տրղան պաչում ա ընդրան, ետավ մեղա յա կյամ։ Ախճիգյը ներում ա։

Տրղան հրրսընքատերերին լոխ նաղլ ա անըմ ուրան կրլխավն անց կացածը։ Ասըմ ա. — Ցրես պիտի էս ըխճրկանը նհետ փրսակվիմ, վեշ թա՞ էն թաքավերին ըխճրկանը նհետ, թող էտ թաքավերը նըղանա վեչ։

Հենց էտ քըշերը հըրսանիք ըն անըմ։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։

Հըրսընքանը հետը ընդրանք շատ օրախ, բախտավեր ըն ապրըմ, միչև ուրանց Սիմոն ծուրունի տրեռնալը։

Երգյինքան էտ քըշեր աստխեր ծըլլացին, հու մուրազ օնի, թող ասի, վեր կադարվի։ Էտ քըշեր Շուշի-Ղալին կանանչ-կյարմուր բախչոցան, էն տեսակ-տեսակ, ռանգյ-ռանգյ թոփ վարթերան շաղ տվին փունջերավ... փունջերին մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ կյըրողին, վեր վըետ քաշին էն անմահական վըետը, ուրանց հոքին փառավըերի՞։